



11. Ժամային գոտիների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....  
**1,5 միավոր**
1. Լոնդոնը 1-ին ժամային գոտում է:
  2. Մագելանի արշավախումբը 1 օր կորցրել էր, որովհետև վերադառնալիս նավարկել էր արևմուտքից արևելք ուղղությամբ:
  3. Ժամային գոտիների սահմանները ցամաքի վրա անցկացվում են պետական կամ վարչական սահմաններով:
  4. Ժամային գոտիները սահմանազատվում են գուգահեռականներով, որոնք իրարից հեռու են  $15^\circ$  -ով:
  5. Զրոյական կամ 24-րդ ժամային գոտին գտնվում է արևելյան երկայնության  $7^\circ 30' - 22^\circ 30'$  միջօրեականների միջև:
  6. Ամսաթվի փոփոխման գիծն ընդունված է անցկացնել  $180^\circ$  միջօրեականով, Բերինգի նեղուցով անցնող միջօրեականով և այլ շեղումներով:
12. Աշխարհի բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....  
**1,5 միավոր**
1. Ժամանակակից խառը ռասաների ներկայացուցիչները մեծ տարածում ունեն Լատինական Ամերիկայում:
  2. Բնակչության վերարտադրությունը հիմնականում պայմանավորված է երկրի պետական կառուցվածքով:
  3. Զարգացած երկրների մեծ մասում բնակչության սեռային կազմում գերակշռում են տղամարդիկ:
  4. Ցանկացած երկրի բնակչության սեռատարիքային կառուցվածքը կախված է բնակչության վերարտադրության բնույթից:
  5. Ռասաների բնութագրիչ հատկանիշներն են լեզուն, մշակույթը և կրոնը:
  6. Տարաբնակեցման վրա ազդող հիմնական և որոշիչ գործոնը տնտեսականն է՝ արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, տրանսպորտը և սպասարկման ոլորտը:
13. Երկու քաղաքներ գտնվում են նույն միջօրեականի վրա: Դրանցից մեկը գտնվում է հս. լ.  $32^\circ 30'$  - ի, իսկ մյուսը՝ հվ. լ.  $10^\circ 30'$  - ի վրա: Որոշել դրանց միջև եղած հեռավորությունը կլիումետրով.....  
**1 միավոր**
14. Երկրում բնակչության թիվը 12 մլն. է, իսկ գյուղական բնակչությունը՝ 4 մլն. մարդ: Որոշել ուրբանիզացման մակարդակը.....  
**1 միավոր**
15. ՀՀ տրված լեռնագագաթներից որո՞նք ունեն հրաբխային ծագում.....  
**2 միավոր**  
 Թեժ լեռ, Ծղուկ, Ուրասար, Գոգի, Արմաղան, Կապուտջուղ, Աժդահակ, Աչքասար, Ուրծ, Խուստուփ, Լավվար, Մեծ Եղնախաղ, Արայի լեռ, Միափոր, Բովաքար, Մեծ Իշխանասար, Արագած:
16. Դուրս գրել սահմանադրական միապետությունները.....  
**1 միավոր**  
 Իտալիա, Ճապոնիա, Պորտուգալիա, Նիդերլանդներ, Իսպանիա, Սաուդյան Արաբիա, Օման, Լյուքսեմբուրգ, Ռումինիա, Չեխիա, Հունաստան, Վատիկան:
17. Երկրակեղևում ամենատարածված տարրն է.....  
**1 միավոր**